



Ռուզաննա ՐԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հեղափոխական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապարաստվել է աշխարհի փարբեր երկրների համալսարաններում:

 <https://orcid.org/0000-0003-2226-6435>

ՌԻՍՈՒՑԶԻ ԱՇԽԱՏԱՎԱՐԸ. ԱՐԴՅՈՐՔ ԱՅՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ Ե ՌԻՍՈՒՑԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-52

Հիմնաբառեր. ուսուցիչ, աշխատավարձ, աշխատանք, որակ, արդյունք

Աշխատավարձն ուսուցիչներին մոտիվացնող բազմաթիվ գործոններից մեկն է միայն, սակայն լավագույն թեկնածուներին ներգրավելու և լավագույն ուսուցիչներին համակարգում պահելու տեսանկյունից՝ ամենաէականը: Ցածր աշխատավարձերը դժվարացնում են նոր ուսուցիչների ներգրավման և արդեն աշխատող ուսուցիչներին համակարգում պահելու գործընթացը: Բացի այդ, ուսուցչի աշխատավարձը խիստ փոխկապված է աշակերտների ցուցաբերած արդյունքի հետ:

Հոդվածում ուսումնասիրվել է փարբեր երկրներում ուսուցչի աշխատավարձի և դրա՝ նվազագույն աշխատավարձի ու նվազագույն սպառողական զամբյուղի հետ հարաբերակցությունը, կատարվել են համեմատություններ ՀՀ նույն ցուցանիշի հետ: Ի փարբերություն շարքայ երկրների, որտեղ թեև ուսուցչի աշխատավարձը ցածր է այլ ոլորտների աշխատողների աշխատավարձերի համեմատ, սակայն հնարավորություն փայլ է արժանավայել կյանքով ապրելու, Հայաստանում այս խնդիրն առավել սուր է դրված. ուսուցչի աշխատավարձը ոչ միայն ցածր է այլ ոլորտների աշխատողների աշխատավարձերի համեմատությամբ, այլև շարք հաճախ հնարավորություն չի փայլ արժանավայել կյանքով ապրելու: Ուստի առաջարկվում է բարձրացնել ուսուցչի բազային աշխատավարձը՝ համակարգում առավել որակյալ կադրեր ներգրավելու, աշակերտների ցուցաբերած արդյունքը՝ կրթության որակը բարելավելու նպատակով:

Ուսուցչի աշխատավարձի, ինչպես նաև այդ աշխատանքի կարևորությանն ու պահանջվող ջանքերին դրա համարժեքության հարցը թեժ քննարկման առարկա է դարձել ամբողջ աշխարհում: Սակայն, ինչպես վկայում են Կրթության համաշխարհային մշտադիտարկման որոշ զեկույցների¹ արդյունքներ, ուսուցչի աշխատավարձը հազվադեպ է արտացոլում աշխատանքի ծանրաբեռնվածությունն ու կարևորությունը: Երբ ուսուցիչներն ավելի քիչ են վարձատրվում, քան համեմատելի ոլորտների մասնագետները, քիչ հավանական է, որ լավագույն աշակերտները որոշեն ուսուցիչ դառնալ, իսկ ուսուցիչներն ավելի հավանական է՝ կորցրնեն մոտիվացումը կամ թողնեն ուսուցչի մասնագիտությունը: Աշխատանքի և աշխատավարձի այս անհամամասնության հետևանքները շատ լուրջ են, որոնք էլ, համադրվելով ուսուցչի աշխատանքի բարձր հաշվետվողականության և ծանրաբեռնվածության հետ, հանգեցնում են ճգնաժամի՝ շատ երկրների կանգնեցնելով ուսուցիչների պակասության խնդրի առաջ²:

Ուսուցչի աշխատավարձը չափազանց փոխկապված է աշակերտների ցուցաբերած արդյունքների հետ: Մասնավորապես, 39 երկիր ընդգրկող հետազոտության համաձայն, ուսուցչի աշխատավարձի 15% բարձրացումը նպաստում է աշակերտների ցուցաբերած արդյունքի 6-8% ավելացմանը³: Ըստ մեկ այլ՝ S<2>4 15 երկրի շրջանում կատարված ուսումնասիրության՝ ուսուցչի աշխատավարձի 10% բարձրացումը հանգեցնում է աշակերտների ցուցաբերած արդյունքի 5-10% բարձրացման⁴: Իհարկե, սա ամենևին չի նշանակում, որ

ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը միանգամից բարելավելու է ուսուցման որակը կամ առաջադիմությունը, սակայն երկարաժամկետում դա կնպաստի, որ համակարգ մուտք գործեն ավելի բարձրորակ մասնագետներ:

«**Հ**-ում ուսուցչի մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափը 108800 դրամ էր, իսկ մեկ ուսուցչի հաշվով միջին ամսական անվանական աշխատավարձը 2020 թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ՝ 123,714 ՀՀ դրամ⁵ (զծապատկեր 1), որը ՀՀ միջին աշխատավարձից ցածր է շուրջ 34%-ով⁶: Պետք է նշել, որ 2021 թ.-ին ներդրվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման կարգը, ըստ որի՝ նախատեսվում է կամավոր ատեստավորման արդյունքում 70 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների համար դրույքաչափը սահմանել 200 հազար ՀՀ դրամ և 5 տարի ժամկետով 30-50 տոկոս հավելավճար՝ կախված ցուցաբերած արդյունքից⁷: 2023 թ. բյուջեով նախատեսվում է ԲՏՃՄ (բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաներ և մաթեմատիկա) առարկաների (բացառությամբ մաթեմատիկայի) գծով, ինչպես նաև գյուղական՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների ուսուցիչներին տրամադրել հավելավճար՝ չհամալրվող թափուր հաստիքները համալրելու նպատակով⁸: Սակայն, համեմատելով միջին աշխատավարձի և այլընտրանքների հետ, պետք է նշել, որ դրանք չնչին ավելացումներ են և չեն կարող էականորեն նպաստել չհամալրվող հաստիքների լրացմանը: Մասնավորապես՝ 30 կամ 60 հազար դրամ հավելավճարի

¹ Teacher salaries: A prerequisite for reform, <https://www.iiep.unesco.org/en/teacher-salaries-prerequisite-reform-13479>

² Teacher shortages worry countries across Europe, <https://www.euronews.com/my-europe/2022/11/30/teacher-shortages-worry-countries-across-europe#:~:text=There%20will%20be%20a%20shortfall,vacant%20teaching%20posts%20in%20France.>

³ Teaching and learning: achieving quality for all, EFA Global Monitoring Report, 2013-2014 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000225660?fbclid=IwAR3-6ChQhCtrLe7CVuzoELa2X_IIfGAoUM7_GMYD13TpPi-FbEutmrMU7Q

⁴ Teachers' pay and pupil performance <https://cep.lse.ac.uk/pubs/download/cp352.pdf>


⁵ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. հունվարի 26-ի N 21-Ն հրաման՝ «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149769>

⁶ ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձը 2020 թ. առաջին կիսամյակի դրությամբ 186,410 ՀՀ դրամ է, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_142.pdf


⁷ ՀՀ կառավարության 2022 թ. ապրիլի 28-ի N 596-Ն որոշում՝ «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=162427>

⁸ Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, <https://escs.am/am/news/13192>

Պետական հատվածի միջին աշխատավարձ



Ոչ պետական հատվածի միջին աշխատավարձ




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1




Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների և տնտեսական գործունեության տեսակների, 2020 թ. հունվար-հունիս (<< դրամ)⁹

⁹ Կազմվել է՝ https://www.armstat.am/file/article/sv_06_20a_142.pdf տվյալների հիման վրա:

Աշխատավարձը՝ ճշգրտված գնողունակության պարիտետով (եվրոյի հիմքով)



Նվազագույն աշխատավարձի հետ հարաբերակցությունը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Ուսուցչի՝ գնողունակության պարիտետով ճշգրտված տարեկան բազային աշխատավարձը և նվազագույն աշխատավարձի հետ դրա հարաբերակցությունը որոշ եվրոպական երկրներում, 2020-2021 թթ.¹⁴


խատավարձը ցածր է, բայց ոչ թե ցածր է այնքան, որ հավասար կամ ցածր լինի նվազագույն սպառողական զամբյուղից, այլ ցածր է այլ ոլորտների համեմատ (երկրների ընտրությունը պայմանավորված է դրանց վերաբերյալ տվյալների հասանելիությամբ):

Ինչպես կարելի է նկատել գծապատկեր 2-ից, եվրոպական երկրներում նույնպես ուսուցչի տարեկան աշխատավարձը չափազանց տարբեր է ըստ երկրների. համաձայն գնողունակության պարիտետի՝ այն տատանվում է 7824-ից (Ալբանիա) մինչև 50357 եվրոյի (Գերմանիա) միջա-

կայքում, առանց գնողունակության պարիտետի ճշգրտման՝ տատանումն ավելի մեծ է՝ 4233-ից (Ալբանիա) մինչև 69076 եվրո (Լյուքսեմբուրգ): Սակայն, բացի գնողունակության պարիտետով ճշգրտումից, նպատակահարմար է նաև համեմատել, թե ուսուցչի աշխատավարձն ինչ հարաբերակցության մեջ է գտնվում տվյալ երկրի նվազագույն աշխատավարձի հետ: Վերոնշյալ երկրներից Լեհաստանն ու Սլովակիան ունեն ամենացածր հարաբերակցությունը՝ 1.1-1.2, որը գրեթե հավասար է Հայաստանի ցուցանիշին՝ 1.152 (ըստ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022 թ. N79 հրա-

¹⁴ Կազմվել է՝ <https://www.euronews.com/next/2022/12/10/teachers-pay-which-countries-pay-the-most-and-the-least-in-europe> տվյալների հիման վրա:

¹⁵ ՀՀ ԿԳՄՍ նախարարի դեկտեմբերի 2022 թ. 7-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» N 79-Ն հրաման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171396>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ուսուցչի բազային աշխատավարձի և նվազագույն սպառողական զամբյուղի հարաբերակցությունը¹⁶

մանի¹⁵, որն ուժի մեջ է մտնելու 2023 թ. սեպտեմբերի 1-ին): Սակայն, Հայաստանում նվազագույն աշխատավարձը, սովորաբար, նվազագույն սպառողական զամբյուղից ցածր է եղել. 2022 թ. 3-րդ եռամսյակում ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 76,459 ՀՀ դրամ, 2023 թ. բյուջեով սահմանված նվազագույն աշխատավարձը՝ 75,000 ՀՀ դրամ՝ գրեթե հավասար նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին:

Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկվում է՝ նվազագույն պարենային զամբյուղը բազմապատկելով 1,85 գործակցով: Երբ այս մեթոդաբանությամբ ենք հաշվարկում, ապա անգամ Լեհաստանում ուսուցչի աշխատավարձը 4.8 անգամ գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (գծապատկեր 3):

Վերոնշյալ երկու գծապատկերներից

կարելի է եզրակացնել, որ թեև ուսուցչի աշխատավարձը շատ երկրներում է ցածր, նվազագույն աշխատավարձի համեմատությամբ՝ նույնիսկ համադրելի ՀՀ-ի հետ (Լեհաստան, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան), սակայն նվազագույն սպառողական զամբյուղի համեմատությամբ Հայաստանում ուսուցչի աշխատավարձն անհամեմատ ցածր է, ինչն էլ ղոլորում սերընդափոխության սրացող խնդրի առաջացման հիմնական պատճառներից է: Այլ հավասար պայմաններում շատերը գուցե համաձայնեն աշխատել իրենց նախընտրելի մասնագիտությամբ՝ թեկուզև այլ ղոլորտների համեմատ քիչ աշխատավարձ ստանալով, սակայն երբ արժանավայել կյանքի համար անհրաժեշտ նվազագույնը չի ապահովվում, ապա այս դեպքում համապատասխան համակարգ մուտք գործողների անհրաժեշտ թվաքանակը չի ապահովվում:

¹⁶ Հաշվարկները կատարել է հեղինակը՝ նշված աղբյուրների տվյալների հիման վրա, <https://www.euronews.com/next/2022/12/10/teachers-pay-which-countries-pay-the-most-and-the-least-in-europe>, <https://eurydice.eacea.ec.europa.eu/publications/teachers-and-school-heads-salaries-and-allowances-europe-20202021>, https://left.eu/content/uploads/2021/07/Study-EN_020621.pdf

- <https://www.e-draft.am/projects/4013/about>
9. ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_142.pdf
 10. Teaching and learning: achieving quality for all, EFA Global Monitoring Report, 2013-2014, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000225660?fbclid=IwAR3-6ChQhCtrLe7CVu-zoELa2X_IlfGAoUM7_GMYD13TpP1i-FbEutmrMU7Q
 11. Teacher salaries: A prerequisite for reform, <https://www.iiep.unesco.org/en/teacher-salaries-prerequisite-reform-13479>
 12. Teacher shortages worry countries across Europe, <https://www.euronews.com/my-europe/2022/11/30/teacher-shortages-worry-countries-across-europe#:~:text=There%20will%20be%20a%20short-fall,vacant%20teaching%20posts%20in%20France>
 13. Teachers' pay and pupil performance <https://cep.lse.ac.uk/pubs/download/cp352.pdf>
 14. <https://www.euronews.com/next/2022/12/10/teachers-pay-which-countries-pay-the-most-and-the-least-in-europe>
 15. <https://eurydice.eacea.ec.europa.eu/publications/teachers-and-school-heads-salaries-and-allowances-europe-20202021>
 16. https://left.eu/content/uploads/2021/07/Study-EN_020621.pdf

Рузанна ТАДЕВОСЯН

Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ЗАРПЛАТА УЧИТЕЛЯ: ОТРАЖАЕТ ЛИ ОНА ВАЖНОСТЬ ТРУДА УЧИТЕЛЯ?

Зарботная плата - лишь один из многих факторов, влияющих на мотивацию учителей, но это самый важный фактор в привлечении лучших кандидатов и удержании лучших учителей в системе. Низкие зарплаты затрудняют привлечение новых учителей и удержание уже работающих в системе. Кроме того, заработная плата учителя сильно коррелирует с успеваемостью учеников. В статье изучена заработная плата учителя в разных странах и ее соотношение с минимальной зарплатой и минимальной потребительской корзиной, проведены сравнения с РА. В отличие от многих других стран, где зарплата учителя невелика по сравнению с зарплатой в других отраслях, но все же позволяет вести достойную жизнь, в случае с Арменией эта проблема острее, поскольку она не только низкая по сравнению с зарплатами других отраслей, но и зарплата учителя очень часто не дает шанса на достойную жизнь. С этой целью предлагается поднять базовую заработную плату учителя для привлечения квалифицированных кадров, улучшения показанных учениками результатов - качества образования.

Ключевые слова: *учитель, заработная плата, работа, качество, результат*

Ruzanna TADEVOSYAN

Junior researcher at «Amberd» Research Center, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

TEACHER'S SALARY: DOES IT REFLECT THE IMPORTANCE OF THE TEACHERS' WORK?

Salary is only one of many factors that affect teachers' motivation, but it is the most important factor in attracting the best candidates and keeping the best teachers in the system. Low salaries make it difficult to attract new teachers and retain those already in the profession. In addition, the teacher's salary is strongly correlated with the pupils' performance. In the paper, the teacher's salary in different countries and its ratio with the minimum salary and the minimum expenditure basket were studied, and comparisons were made with the RA. Unlike many other countries, where the salary of a teacher is low compared to salaries of other sectors, but still allows living a decent life, in the case of Armenia, this problem is more acute to the extent that it is not only low compared to other sectors, but also very often the teacher's salary does not give a chance to live a decent life. Therefore, it is proposed to raise teachers' statutory salaries in order to attract more capable people, to improve pupils' performance.

Keywords: *teacher, salary, work, quality, performance*